

Ժողովքը, զոր գումարել խոստացած էր Մովսէս, տեղի ունեցած է: Այս մասին P. Epifanio di S. Giov. Battista Բոկոտոն կարմեղեան, 26 Յունուար 1631 հաղորդած է Ս. Ժողովոյն, թէ «Մովսէս Հայոց կաթողիկոսը գումարած է ժողով մը ի Քրիստոս երկու բնութիւն վարդապետութեան մասին, զոր նոյն կաթողիկոսը կը խոստովանէր արդէն»¹². Իսկ 1631, Դեկտեմբերին կը գրէր Գոայէն¹³, թէ «արեւելքի մէջ սովի, ժանտախտի եւ պատերազմներու պատճառաւ շատ մեծ է խեղճութիւնն եւ թշուառութիւնը... հաղորդակցութիւնք խղճած են: Ներկայիս Պարսկաստանէն որ եւ է լուր չի հասնիր. չգիտեմ թէ ինչ արդիւնքի յանգեցաւ այն ժողովը, որ պիտի գումարուէր Հայաստանի մէջ, բանակցելու համար ազգին վերահաշտութեան եւ Քաղկեդոնի ժողովին ընդունելութեան մասին: Շատ կը վախնամ, որ վերոյիշեալ պատճառները արդելք հանդիսացած ըլլան»:

Այս մասին ակնարկութիւն ըրած է նաեւ Ս. Ժողովը իւր 1633, Հոկտ. 8ին առ Յովհ. Մուրինօ ի Կ. Պոլիս թղթին մէջ. Մովսէս կաթողիկոս «շատ հակամէտ էր սուրբ միութեան. իւր առ Ս. Քահանայապետ գրած թղթերու մէջ նորոված էր Եւտիքէսն եւ դաւանած ի Քրիստոս երկու բնութիւն. նոյն իսկ, ինչպէս P. Epifanio կը գրէր, գումարած էր

¹² Acta S. Congr. 1632—1633, vol. 8, p. 21.

¹³ Prop. Armenia, vol. 104, f. 172.